ՀՀ Արմավիրի մարզպետ Համբարձում Մաթևոսյանի շնորհավորանքի խոսքը 2020 թվականի ամառային զորակոչի կապակցությամբ

01.07.2020

Այսօր Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում, այդ թվում՝ Արմավիրի մարզում, մեկնարկում է 2020 թվականի ամառային զորակոչը:

Առաջնորդվելով արտակարգ դրության իրավական ռեժիմի կանոնների պահպանման կարևորությամբ՝ այսօր խախտում ենք առաջին զորակոչին Արմավիրի մարզից զինծառայության մեկնող նորակոչիկներին Սարդարապատի հուշահամալիրից ճանապարհելու ավանդույթը:

Ելնելով ստեղծված իրավիճակից՝ ցանկանում եմ այս ձևաչափով շնորհավորել Արմավիրի մարզի և ողջ հանրապետության նորակոչիկներին՝ Հայոց հաղթանակած բանակ զորակոչվելու կապակցությամբ:

Սիրելի նորակոչիկներ, այսօրվանից դուք ստանձնում եք հայրենիքի պաշտպանի դերը: Ի դեմս ձեզ՝ մենք տեսնում ենք այն քաջարի անհատին, ով պատվով և պատասխանատվության բարձր գիտակցումով կկատարի իր սահմանադրական պարտքը՝ շարունակելով նախորդների հայրենանվեր առաքելությունը:

Իմ եղբայրական խնդրանքն ու հորդորն է ձեզ՝ ծառայության ընթացքում լինել աչալուրջ և երբեք չփնտրել ներքին թշնամիներ ու չպառակտվել: Քանի որ բոլորիս միավորող գաղափարը մեր հայրենիքն ամուր ու անսասան պահելն է, մեր ժողովրդի համար խաղաղ ու բարօր կյանք ապահովելը:

Այսօրվանից այդ պատասխանատվության կարևոր բաժինն եք ստանձնում նաև դուք, սիրելի նորակոչիկներ՝ հայրենիքի կողմից պաշտպանված քաղաքացուց դառնալով հայրենիքի պաշտպան: Եվ իմ մեծագույն ցանկությունն է, որ ձեր երկամյա ծառայությունն անցնի խաղաղության պայմաններում, իսկ բանակային տարիները միայն նպաստեն ձեր ռազմական գիտելիքների ու հմտությունների հարստացմանը, մարդկային որակների կայունացմանը:

Իմ շնորհակալությունն եմ հայտնում նաև մեր նորակոչիկների հարգարժան ծնողներին՝ իրենց զավակներին արիաբար դաստիարակելու ու հայրենասիրական ոգի փոխանցելու համար, որի արդյունքում նրանք գիտակցում են հայրենիքի գինը, զինվորական ծառայության դերն ու նշանակությունը:

Եկեք բոլորս միասին բարձր տրամադրությամբ և լավատեսությամբ մեր նորակոչիկներին ճանապարհենք Հայոց բանակ՝ նրանց մաղթելով խաղաղ ծառայություն և բարի վերադարձ:

Աստված պահապան բոլորիս: